HAL
open science

-

Arestakes Simavoryan

To cite this version:

Arestakes Simavoryan. - . 2nd International Scientific Conference on “Contemporary Problems of Management” Dedicated to the 25th Anniversary of the Public Administration Academy of the Republic of Armenia, Public Administration Academy of the Republic of Armenia, Oct 2019, Yerevan, Armenia. pp.367-374. hal-03265167

HAL Id: hal-03265167

https://hal.science/hal-03265167

Submitted on 19 Jun 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L’archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d’enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

ԱՐԵՍՏԱԿԵՍ ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիա,
Տարածաշրջանային հետազոտությունների
կենտրոնի գիտաշխատող

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հոդվածը վերաբերում է ԵԱՏՄ շրջանակներում Հայրենիք-Սփյուռք փոխգործակցության հնարավորություններին: Մասնավորապես ներկայացվում է, թե ինչպիսի եղանակներով ու մեխանիզմներով է հնարավոր ԵԱՏՄ անդամ երկրների կազմի մեջ մտնող սփյուռքի մեր հայրենակիցների ներգրավումը այդ հարաբերություններում: Շեշտը հիմնականում դրվել է ԵԱՏՄ շրջանակներում հայկական սփյուռքի գիտավերլուծական հանրույթի և գործարար միջավայրի հետ տարբեր ձևաչափերով համագործակցելու հնարավորությունների վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում այդ կապերի ինստիտուցիոնալացմանը, որի համատեքստում ներկայացված են որոշ առաջարկություններ:

Հիմնաբառեր. *Հայաստան, ԵԱՏՄ, հայկական սփյուռք, գիտավերլուծական հանրություն, սփյուռքի ներուժ:*

Գլոբալ հարթությունում աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ներկայիս բարդ իրադրությունը պետություններին հարկադրում է միավորվել զանազան միությունների հետ: Միջազգային ասպարեզում առկա են տարբեր մակարդակի ինտեգրացիոն համակարգեր (ԵԱՏՄ, ԲՐԻԿՍ, ԵՄ, ՀԱՊԿ, ՆԱՏՕ և այլ), որոնք ստեղծվել են տնտեսաքաղաքական և ռազմաքաղաքական ակնկալիքներից ելնելով: Հայաստանի Հանրապետությունը ևս անդամակցում է մի քանի միջազգային կազմակերպությունների, որոնցից մեկն էլ Եվրասիական տնտեսական միությունն է (այսուհետ՝ ԵԱՏՄ): 2015 թ. ՀՀ-ն պաշտոնապես անդամակցեց ԵԱՏՄ-ին, որի անդամներ են նաև Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանն ու Ղրղզստանը:

Համաձայն 2017 թ. տվյալների՝ հայերի թիվը Ռուսաստանում 2.6 մլն է, Բելառուսում՝ 35 հզ., Ղազախստանում՝ 25 հզ. և Ղրղզստանում՝ 3 հզ. [1, էջ 495-498]: Տվյալ երկրներում հայերի ներգրավվածությունը օրենսդիր և գործադիր մարմիններում, տնտեսության, գիտության, լրատվության ու այլ ոլորտներում հնարավորություն է ստեղծում կիրառելու այդ ներուժը

ՀՀ-ԵԱՏՄ հարաբերությունների զարգացման համար: Այդ հարաբերություններն ընդգրկում են գործունեության ավելի լայն շրջանակ: Այս աշխատանքում շեշտը դրել ենք սփյուռքի գիտավերլուծական հանրույթի և գործարարների հետ համագործակցության հնարավորությունների[6], ավելի ստույգ՝ այն հարցի վրա, թե ինչպիսի եղանակներով ու մեխանիզմներով է հնարավոր ԵԱՏՄ անդամ երկրների կազմի մեջ մտնող սփյուռքի մեր հայրենակիցների ներգարվումը այդ հարաբերություններում:

Չնայած պատմական որոշակի շրջանում իբրև ազդեցության գործիք սփյուռքի դերը բազմաթիվ առումներով լուսանցքային է եղել [4, c. 157], ներկայում, առավել քան երբևէ, սփյուռք ունեցող երկրներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում պետություն-սփյուռք հարաբերությունների ձևավորմանը, հայրենիքում ֆինանսական ներդրումների հնարավորություններին, կազմակերպչական հարցերին և այլն [5, էջ 7-213, 6, c. 66-75]: Ավելին, սփյուռքը՝ որպես հանրային դիվանագիտության սուբյեկտ, քաղաքական, տնտեսական, գիտական և այլ տեսանկյուններից վերածվել է կարևոր «ռազմավարական ռեսուրսի»:

Մի կողմից այդ ներուժը նշանակալի է սեփական երկրի զարգացման համար, մյուս կողմից կարևոր «գործընկեր» է միջպետական հարաբերություններում[7]: Ընդ որում, պետության հնարավորություններով ու առանձնահատկություններով, էնդոգեն և էգզոգեն գործոններով պայմանավորված՝ սփյուռքի հանդեպ քաղաքականությունում կիրառվում են զանազան ռազմավարական-հայեցակարգային մոտեցումներ՝ համապատասխան գործառութային մեխանիզմներով:

Վերլուծելով տարբեր սփյուռքների վերաբերյալ հրապարակված զեկույցներն ու գիտական հրապարակումները՝ կարող ենք փաստել, որ սփյուռքի կողմից հիմնադրված էթնիկ բիզնեսները առօրյա կյանքի մաս են կազմում ընդունող երկրներում: Նրանք ստեղծել են սեփական բարգավաճող առևտրային և ֆինանսական համայնքները, զարգացրել սեփական

[6] Հայաստան-ԵԱՏՄ համագործակցությունում հայկական սփյուռքի գործոնը կարևորվել է թե՛ պաշտոնական ելույթներում և թե՛ փորձագիտական վերլուծություններում, մասնավորապես, գործարար շրջանակների արդյունավետ ինտեգրման, ներդրումների ներգրավման և ներդրումային ներուժի ընդլայնման, հարակից այլ հարցերի տեսանկյունից [2, էջ 96-228, 3, c. 117-122]:

[7] Ըստ հետազոտողների՝ չինական սփյուռքն ավելի մեծ ազդեցություն ունի ԱՄՆ-Չինաստան երկկողմ տնտեսական, քան քաղաքական հարաբերությունների վրա: Ի տարբերություն դրա՝ տարաբնույթ քաղաքական հարցերում, որոնք ծագում են, օրինակ, ԱՄՆ-ի և Մեքսիկայի միջև, դրական իմաստով մեծ դերակատարում ունի ԱՄՆ մեքսիկական սփյուռքը [4, c. 154-169]:

գործարարներին ու կուտակել գնողականություն՝ նվաճելով ավելի լայն հասարակության ուշադրությունը: Երբեմն նրանք նույնիսկ ֆինանսական գործիքներ են մշակել իրենց սեփական ֆինանսների համար [7]:

Միևնույն ժամանակ սփյուռքի գործարարները խթանում են միջազգային բիզնեսը տարբեր ուղիներով, ներդրումներ են կատարում հայրենիքում: Օրինակ՝ նրանք հանդես են գալիս որպես միջնորդ՝ կապելով սփյուռքի կազմակերպությունները տեղեկատվական աղբյուրներին: Ակտիվ են կառավարման, ձեռներեցության և ներդրումների մեջ, ինչպես նաև ունեն ձեռներեցության հետ կապված դերեր և շարժիչ ուժեր, որոնք ազդում են սփյուռքի գործարարության մեթոդի վրա: Որոշ մասնագետներ շեշտում են, որ ազգությունը մեծ մասամբ ձևավորում է հաճախորդների շրջանակը և ապրանքատեսականին, բայց մեծ թվով սփյուռքի գործարարներ էթնիկ խմբերից տեղափոխվում են դեպի հիմնական ներգաղթի երկրների գլոբալ-կապակցված տնտեսություններ և ձեռնարկատիրության անհրաժեշտությունից դեպի նոր հնարավորություն [8, էջ 27-28]:

Այս գործընթացներն առնչվում են նաև հայկական սփյուռքին, թեև առկա են որոշակի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններ: Դրանց վրա ազդող հանգամանք են ինչպես տվյալ երկրի ընդհանուր կացությունը, այնպես էլ այնտեղ առկա պայմանները ազգային փոքրամասնությունների տնտեսական գործունեության ծավալման համար:

Հետխորհրդային երկրներում (նկատի ունեք նաև ԵԱՏՄ երկրները) տնտեսական փոխգործակցության մեջ մասամբ առկա հայրենակցական գործոնը գալիս է հաստատելու սփյուռքի ընդհանուր օրինաչափությունները: Որևէ երկրում հաստատվելով՝ սկզբնական շրջանում հայերն առավելաբար փորձում էին տնտեսական գործունեություն ծավալել իրենց համերկրացիների հետ: Այսօր նույնպես նոր արտագաղթած հայերը փորձում են իրենց հայրենակիցների, հաճախ ավելի նեղ իմաստով համերկրացիների (նույն քաղաք, գյուղ, մարզ) հետ տնտեսական գործունեություն սկսել: Սակայն հետագայում, ինտեգրվելով ընդունող հասարակությանը, նորեկները, որպես կանոն, խորացնում են կապերը տեղի շրջանակների հետ և ազգակիցների հետ տնտեսական փոխգործակցությունը շարունակում միայն տնտեսական շահերի համընկնման պարագայում: Տնտեսական գործունեությամբ զբաղվելու լայն հնարավորություններն այստեղ ավելի մեծ են, ինչը մղում է հայերին ակտիվ գործարար աշխատանքներ ծավալելու տարբեր ոլորտներում՝ ձևավորելով շոշափելի կապիտալ:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործում սփյուռքը ևս իր մասնակցությունն ունի: Հաշվի առնելով դա՝ ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ արդյունավետ ինտեգրման գործում պետք է կարևորել հայ-

կական սփյուռքի դերակատարությունը: Ներկայացնենք կիրառական նշանակություն ունեցող մի քանի առաջարկություն, որոնք, մեր կարծիքով, նոր որակ կարող են հաղորդել արդեն իսկ գոյություն ունեցող որոշակի ձևաչափերով համագործակցությանը:

- Ստեղծել «***Սփյուռքի հետ տնտեսական հարաբերությունների խորհուրդ»,*** որն անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներում կքարտեզագրի ԵԱՏՄ անդամ պետություններում առկա սփյուռքի ֆինանսատնտեսական ռեսուրսները, կգնահատի դրանց ներուժը[8]: Ենթադրվում է, որ խորհուրդը չի սահմանափակվելու ռեսուրսների հաշվառմամբ, այն իր կառուցվածքում կարող է ունենալ վերլուծական ստորաբաժանում, որի խնդիրը Հայրենիք-Սփյուռք տնտեսական կապերի զարգացման համար մեխանիզմների մշակումն է լինելու: Միևնույն ժամանակ պետք է ներկայացվեն Հայաստանի տնտեսության զարգացմանն ուղղված ռազմավարական (մեգա)նախագծեր տնտեսության տարբեր ճյուղերի համար: Նպատակահարմար է, որ Խորհուրդը բաղկացած լինի սփյուռքի և Հայաստանի քաղաքական ու տնտեսական ոլորտներում գործունեություն ծավալող ներկայացուցիչներից, համալրված լինի նաև բարձրակարգ և փորձառու մասնագետներով: Կարծում ենք, որ երկու կողմերի ներգրավվածությունը խորհրդի կազմում ավելի իրատեսական է դարձնում կառույցի արդյունավետությունը: Կարծում ենք նաև, որ այն պետք է ունենա պետական կարգավիճակ՝ որևէ նախարարության կազմում:
  - Հիմնադրել տնտեսական տարբեր ճյուղերում գործարարությամբ զբաղվող սփյուռքի ձեռնարկատերերին միավորող կառույցներ ԵԱՏՄ անդամ երկրներում, որոնք կարող են վերածվել յուրօրինակ հենակետերի ոչ միայն Հայրենիք-Սփյուռք, այլև Սփյուռք-Սփյուռք գործարար կապերի ստեղծման համար:
  - Հնարավորություն ստեղծել սփյուռքի կապիտալի մասնակցությամբ համատեղ տնտեսավարող սուբյեկտներ հիմնելու համար: Խոսքը վերաբերում է ոչ միայն սփյուռքի ձեռնարկատերերի կողմից ներդրումներ կատարելուն, այլև այն ձեռնարկությունների ստեղծմանը, որոնց բաժնետոմսերի մի մասը կպատկանի սփյուռքին, մյուս մասը՝ տեղի գործարարներին[9]:

---

[8] Հեռանկարում՝ նաև ողջ սփյուռքի:

[9] Պետություն-սփյուռք համագործակցության իրանական փորձի ուսումնասիրության հիման վրա հիշյալ առաջարկությունը հնչեցրել է սփյուռքի հարցերով փորձագետ Վ. Հովյանը [տե՛ս 9, էջ 56]:

Ամփոփելով տնտեսական մասը՝ նշենք, որ հարաբերություններին ռազմավարական խորություն հաղորդելու նպատակով անհրաժեշտ է նաև սահմանել համատեղ օրակարգ, համապատասխան քայլեր ձեռնարկել հարկային և մաքսային ոլորտներում՝ օրենսդրական նախաձեռնությունների տեսքով, նաև ջանքեր գործադրել երկկողմ հարաբերություններում առկա խոչընդոտների վերացման ուղղությամբ:

Սփյուռք ունեցող երկրներին բնորոշ է նաև տարբեր նկատառումներով մտավոր ներուժի համախմբումը համազգային նշանակության հարցերի շուրջ: Այս դեպքում մտավոր ներուժ ասելով նկատի ունենք սփյուռքի գիտական և վերլուծաբանական հանրությունը: Բանն այն է, որ սփյուռքյան պետական քաղաքականության մեջ տարբեր երկրներ այդ ներուժը կիրառում են ոչ միայն հայրենիք-սփյուռք գիտական կապերի, հայրենական գիտակրթական համակարգի բարեփոխման, բարձր տեխնոլոգիաների, սոցիալ-տնտեսական բնագավառի զարգացման նպատակով: Նրանք մասնակցություն են ունենում նաև միջպետական հարաբերությունների, դիվանագիտական ջանքերի զարգացման և ամրապնդման գործում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն ասպարեզում գործունեություն իրականացնում են սփյուռք ունեցող բազմաթիվ առաջատար երկրներ (Չինաստան, Հնդկաստան, Իսրայել, Թուրքիա և այլն): Այնպես որ, պետություն-սփյուռք հարաբերություններում գիտական ներուժի օգտագործումը թե՛ լայն, թե՛ նեղ իմաստով բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի[10]:

Ինչ վերաբերում է հայկական սփյուռքին, ապա մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ աշխարհի տարբեր երկրների հայ գիտնականներն ընդգրկված են ակադեմիական հաստատությունների, ինչպես նաև վերլուծական կառույցների՝ ուղեղային կենտրոնների գործունեության մեջ, որոնք գործնական քաղաքականության վրա ունեն անմիջական ազդեցություն: Այս տեսանկյունից նկատենք, որ, օրինակ, ԵԱՏՄ երկրների շարքում հայկական գիտավերլուծական հանրության գերակշիռ մասը (քաղաքագետներ, տնտեսագետներ, իրավաբաններ և այլն) բաժին է ընկնում Ռուսաստանին [11, էջ 341-356, 12, էջ 24-106]: ԵԱՏՄ շրջանակներում

[10] Օրինակ՝ չինական սփյուռքի գիտական կարողություններն օգտագործվեցին առաջին հերթին Չինաստանի տնտեսության մեջ բեկում մտցնելու առումով, և երկրորդ՝ արտերկրում գործող քաղաքական ու ռազմավարական ուսումնասիրություններ իրականացնող ինստիտուտների չինական ծագմամբ աշխատակիցները ԱՄՆ-Չինաստան երկկողմ հարաբերություններում դարձան միջնորդող օղակ [10, էջ 20-21]:

նրանց ներգրավումը նպատակահարմար է հետևյալ առումներով: Լինելով Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի և Ղրղզստանի քաղաքացիներ՝ նրանք տիրապետում են իրենց բնակության երկրների հասարակական-քաղաքական միջավայրում ընթացող միտումներին, տնտեսական հնարավորություններին, հայկական համայնքների կարողություններին և այլն:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ ԵԱՏՄ պետությունների հայկական սփյուռքի գիտական-փորձագիտական հնարավորությունները նյութականացնելու նպատակով առաջին հերթին արժի հիմնադրել նրանց ***միավորող ասոցիացիա(ներ)*** կամ ***Համահայկական ռազմավարական հետազոտությունների կենտրոն*** (ուղեղային կենտրոն)*:* Իհարկե, նախապես պետք է գնահատել հնարավոր քաղաքական ռիսկերը, հիմնադրման նպատակահարմարությունն ու տեղակայման վայր(եր)ը, կենտրոնի ֆինանսավորման սկզբունքները, առաջնահերթությունների որոշումը, մասնագիտական շրջանակների հստակեցումը, որոնք պետք է ներգրավվեն կենտրոնի աշխատանքներում, այնուհետ՝ փոխգործակցության արդյունավետ ձևաչափերի ու մեխանիզմների մշակման իրականացումը:

Որպես այս աշխատանքների շարունակություն՝ ՀՀ պետական կառավարման մարմինները կարող են պատվիրել ***վերլուծական, կիրառական նշանակության տարաբնույթ հետազոտություններ***, ***օգտվել նրանց խորհրդատվություններից***, ***իրավիճակային գնահատականներից, քաղաքական, տնտեսական կամ այլ իրադարձությունների զարգացման հնարավոր սցենարների վերաբերյալ գնահատականներից և այլն***, որոնք առաջին հերթին վերաբերում են ԵԱՏՄ-Հայաստան շրջանակներում երկկողմ և բազմակողմ հարաբերություններին:

Նկատենք, որ նրանք կարող են օգտակար լինել նաև լոբբիստական և քարոզչական աշխատանքներում՝ համագործակցելով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ: Եվ եթե հաշվի առնենք, որ ԵԱՏՄ-ն գլխավորապես տնտեսական միություն է, բայց նախատեսում է համագործակցություն քաղաքական, սոցիալական, բժշկական, բնապահպանական, մշակութային և այլ ոլորտներում, ապա լայն հնարավորություններ են առաջանում հետագայում այս ձևաչափում ընդգրկելու նաև վերոհիշյալ բնագավառների սփյուռքի հայ մասնագետներին:

Սույն վերլուծությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 18T-5I336 «ԵՄ-ի հետ և ԵԱՏՄ-ում: Նոր մարտահրավերներ և հնարավորություններ Հայաստանի համար» գիտական թեմայի շրջանակում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Հակոբյան Հ.,** Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017:
2. **Ավետիսյան Ս., Գրիգորյան Ա., Բաբաջանյան Ս., Կիրակոսյան Ա.,** Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ, «ԱՄԲԵՐԴ» մատենաշար 28, Երևան, 2015:
3. **Игнатов С.,** Диаспора как фактор увеличения инвестиционного потенциала Республики Армения, «Այլընտրանք» գիտական հանդես, #4, հոկտեմբեր – դեկտեմբեր, Երևան, 2017:
4. **Торреальба А. А.,** Три основных подхода диаспоральной дипломатии во внешней политике, Актуальные проблемы экономики и права, Казань, 2017, Т. 11, № 2.
5. **Սիմավորյան Ա., Հովյան Վ., Վերանյան Կ.,** Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, Երևան, 2017:
6. **Мосейкина М. Н.,** Диаспоральная дипломатия России в странах Латинской Америки: исторический опыт и перспективы, Вестник РУДН, серия "Международные отношения", 2015, № 4.
7. **Zeidman P. F.,** The 'Diaspora Market', (03.01.2012) https://www.franchisetimes.com/March-2012/The-Diaspora-Market/, [հասանելի էր 25.05.2019]
8. **Elo M.,** Diaspora networks in international business: a review on an emerging stream of research, Handbook on International Alliance and Network Research, Cheltenham, 2015.
9. **Հովյան Վ.,** Պետություն-սփյուռք գործակցության իրանական փորձից, «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (78), 2018:
10. **Սիմավորյան Ա.,** Սփյուռքի վերլուծական հանրույթը՝ որպես պետության ներուժ. միջազգային փորձը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 12, 2013:
11. **Հովյան Վ.,** Ռուսաստանի հայ համայնքի գիտական ներուժը հումանիտար ոլորտում, Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2018:
12. **Հարությունյան Գ., Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,** Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, 2013:

АРЕСТАКЕС СИМАВОРЯН
Научный сотрудник Центра региональных исследований
Академии государственного управления РА

ВОЗМОЖНОСТИ ВЗАИМОСОТРУДНИЧЕСТВА РОДИНА-ДИАСПОРА В РАМКАХ ЕАЭС

Статья посвящена возможностям взаимосотрудничества Родина-Диаспора в рамках ЕАЭС. В частности, представлено какими путями и механизмами возможно вовлечение в эти отношения наших соотечественников Диаспоры, входящей в состав стран-членов ЕАЭС. Акцент в основном сделан на возможностях сотрудничества в разных форматах с научно-аналитическим сообществом и бизнес-средой армянской диаспоры в рамках ЕАЭС. Особое внимание обращено на институционализацию этих связей, в контексте которой представлены некоторые предложения.

Ключевые слова: *Армения, ЕАЭС, армянская диаспора, научно-аналитическое сообщество, потенциал Диаспоры.*

ARESTAKES SIMAVORYAN
Research Fellow at the Center for Regional
Studies at Public Administration Academy of the RA

THE POSSIBILITIES OF HOMELAND-DIASPORA INTERACTION IN THE FRAMEWORK OF THE EAEU

The article is about the possibilities of Armenia-Diaspora interaction in the framework of the EAEU. Particularly, it is presented, by what kind of means and mechanisms the inclusion of our compatriots of Diaspora of the EAEU member states into those relationships is possible. The possibilities of cooperation in the framework of the EAEU with the scientific-analytical community and business environment of the Armenian diaspora in various formats are mainly stressed. A special attention is paid to the institutionalisation of those relations, in the content of which some suggestions are presented.

Keywords: *Armenia, EAEU, armenian diaspora, scientific and analytical community.*